«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը

Դաստիարակ՝ Արուսյակ Սարգսյան

Մանկապարտեզ՝ «Սիսիանի թիվ 2 ՆՈՒՀ» ՀՈԱԿ

«Նորավանի գործող խումբ»

2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն. 3

Մեր հայրենիքը. 5

Հայրենաճանաչողության ձեվավորման նպատակը եվ կարեվորությունը. 9

Հայրենաճանաչողության, հայրենասիրության ընկալման եվ ձեվավորման մեթոդները նախադպրոցական տարիքում. 12

Իմ անուշ Հայաստան (Դասի պլան, պարապմունք տարատարիք խմբում) 14

Եզրակացություն. 17

Օգտագործված գրականության ցանկ. 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կարևոր է, որ դու պատրաստ լինես մեռնել հանուն քո հայրենիքի, բայց ավելի կարևոր է, որ դու պատրաստ լինես ապրել հանուն նրա:

Թեոդոր Ռուզվելտ

Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, կործանվում դրա պակասի պատճառով: Հայրենապաշտական դաստիարակություն, ահա՛ մեր փրկության խարիսխը:

Գարեգին Նժդեհ

Առանց հայրենիքի մարդը ժամանակի ու տարածության պատահականությունների քմահաճույքներին մատնված ավազահատիկ է:

Լակորդեր

Վերջին տարիներին մեր հայրենիքում տեղի ունեցած պատերազմներից հետո, ավելի քան երբևէ մեր ժողովրդի և հատկապես՝ սյունեցիներիս համար գերնպատակ է հայրենասեր և հայրենաճանաչ սերունդ դաստիարակելը: Հայրենասիրությունը ծագում է լատիներեն «պատրիոտ» բառից, նշանակում է՝ հայրենիքը սիրող: Հայրենասիրությունն էլ սկսվում և ձևավորվում է հայրենաճանաչողությունից: Հայրենաճանաչողության արժեքային համակարգի ձևավորումը պետք է դրվի վաղ մանկությունից: Հայրենաճանաչողության դաստիրակության նպատակն է կրթել հայրենասեր երեխաներ, ովքեր սիրում են իրենց հայրենիքը, հավատարիմ են հայրենիքին:

Երեխաների հայրենասիրական դաստիարակությունը պետք է սկսել վաղ տարիքից, որովհետև այդ տարիքում են զարգանում և ձևավորվում անձնային հատկությունները: Երեխայի հետագա հաջողություններն ու նվաճումները կախված են նրան կրթող, դաստիարակող, խնամող մեծահասակներից՝ ծնողներից, մանկապարտեզի դաստիարակներից, իսկ հետո էլ ուսուցիչներից: Նախադպրոցական տարիքի երեխայի զարգացմանը առավելապես նպաստում է հոգեկան գործընթացներից՝ հիշողության ու

երևակայության զարգացումը: Նախադպրոցականի հուզական ոլորտը ենթարկվում է զգալի փոփոխության: Այս փարիքում է զարգանում երեխայի զգայական,իմացական, սոցիալական ոլորտները, նա սեփական փորձի միջոցով սկսում է իմաստավորել ձեռք բերած գիտելիքները, ձևավորվում է մտածողությունն ու աշխարհայացքը: Երեխաների դաստիարակությունը պետք է իրականացվի անընդհատ՝ տանը, մանկապարտեզում, դպրոցում, գործողություններում, նույնիսկ խաղի ժամանակ: Մանկավարժական աշխատանքը կառուցված է այնպես որ բառացիորեն անցնում է յուրաքանչյուր սանի սրտով: Նախադպրոցականի մոտ սերը ծնունդ է առնում նրա վերաբերմունքի ձևավորմամբ՝ ընտանիքի, իր տան, ծննդավայրի, իրեն շրջապատող աշխարհի և հայրենիքի նկատմամբ:

Հետազոտական աշխատանքի առարկան

Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների, մեթոդների միջոցով նպաստել թեմայի արդյունավետության բարձրացմանը և սաների կողմից բարդ թեմայի դյուրին ըմբռնմանը:

Հետազոտական աշխատանքի նպատակները.

Ուսումնասիրել սաների հայրենաճանաչության ձևավորման առանձնահատ-կությունները և առաջադրել մանկավարժական արդյունավետ պայմաններ:

Հետազոտության մեթոդները

•Գրական աղբյուրների հետազոտություն,

• Թեմայի վերաբերյալ նյութերի մշակում և համակարգում,,

Հետազոտության խնդիրները.

- *Ներկայացնել սաների հայրենաճանաչության ձևավորումը*
- *Դիտարկել հայրենաճանաչության դաստիարակման մեթոդական նյութերը*

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Բավական չէ հիացիկ վերաբերմունք, անգամ պաշտամունք ունենալ դեպի անցյալ սերունդը.պետք է գերազանցել նրան: Հենց սա է հարգանքի այն պսակը, որ յուրաքանչյուր հետնորդ պարտավոր է դնել նախնյաց հիշատակների կոթողին:

Գարեգին Նժդեհ

Ես հայ եմ...Իմ հայրենիքը արևաշող Հայաստանն է...Ես հպարտ եմ, որ իմ երակներով հոսում է հայի արյունը... Ես իմ մեջ կրում եմ նախնիներիցս ժառանգած հազարամյակներով թրծված հիշողությունը...

Հայ ժողովուրդը աշխարհի հնագույն ժողովուրդներից է, որն անցել է բազում փորձությունների, փառապանքների, չարչարանքների միջով: Տեսել է բազմաթիվ պատերազմներ, կռվել և մաքառել, բայց երբեք չի ծնկել: Հայը, հայ ժողովուրդը տարիներ շարունակ գոյության կռիվ են տվել հանուն ազատության և խաղաղության:Հազարամյակներ ձգվող պատմության ընթացքում չնայած բոլոր բարդություններին և դժվարություններին հայ ժողովուրդը անցել է փառավոր և հերոսական ճանապարհ, կերտել է խիզախումներով և մաքառումներով, կորուստներով և ձեռքբերումներով, մտքի թռիչքներով և արարումներով հայոց պատմություն:

Առանց հայոց պատմության իմացության անհանար է լիովին ազգի կամ հայրենիքի մասնիկը դառնալ, որովհետև պատմությունը միայն ազգի անցած ուղին չէ, այլ նրանում է արտացոլված ազգի ոգին և հոգեբանությունը, բնավորություն, խառնվածքը, մտածելակերպը, իղձերը, ավանդույթները, արժանապատվությունը, մշակույթը:

Ցավոք շրջապատված լինելով թշնամի պետություններով, որոնք միայն ճնշել են ու փորձել զրկել մեզ պետականությունից, մենք պարտավոր ենք կրթվել, հզորանալ, միշտ պատրաստ լինել տարբեր փորձությունների, դրա համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր ոք սիրի, ճանաչի, արժեվորի, գնահատի իր հայրենիքը, ոչ որպես ապրելու վայր, այլ սրբազան օրրան: Անցյալից առած դառը դասերն էլ մեզ չփրկեցին պատմության դաժան կրկնությունից, և այսօր առավել քան երբևէ հարկե միավորվել հանուն մեր սրբազան հայրենքի շուրջ, կրթել և դաստիարակել հայրենաճանաչ, հայրենասեր և հայրենատեր կամքով արի և հպարտ սերունդներ: Դրա համար պետք է

ճանաչենք, սիրենք և պաշտպանենք մեր հայրենիքի ամեն մի անկյունը հանուն գալիք սերունդների, որպես մեր նախնյաց և մեր բոլոր հերոսների սրբազան պատգամ:

Հայաստանի մասին ընդհանուր տեղեկատվություն

Աշխարհագրական տեղեկություններ Հայաստանի Հանրապետության մասին

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է Հարավային Կովկասում: Նրա ներկայիս տարածքը կազմում է 29800կմ քառ.: Այն տեղակայված է ծովի մակարդակից միջինը 1800 մ բարձրության վրա: Հայաստանը հյուսիսից սահմանակից է Վրաստանին, հարավից՝ Իրանին, արևմուտքից՝ Թուրքիային, արևելքից՝ Ադրբեջանին: Այստեղ ամենաբարձր գագաթը Արագած լեռն է՝ 4090մ բարձրությամբ, ամենացածրը՝ Դեբեդ գետի կիրճը (400մ):

Հայաստանն որպես հնագույն քաղաքակրթության օրրան

Ավելի քան 4000 տարվա պատմություն ունեցող Հայաստանն հնդեվրոպական քաղաքակրթության օրրանն է:

Արդյո՞ք Երևանը՝ Հայաստանի մայրաքաղաքը, ավելի հին է, քան Հռոմը:

Շուրջ 2800 տարվա պատմություն ունեցող Երևանն աշխարհի ամենահին գործող մայրաքաղաքներից մեկն է: Երևան քաղաքը 29 տարով ավելի հին է Հռոմից:

Օրհներգը

ՀՀ օրհներգի տեքստը հիմնված է հայ գրող Միքայել Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծության վրա, որն առավել հայտնի է «Մեր հայրենիք» առաջին բառերով: Երաժշտության հեղինակը Բարսեղ Կանաչյանն է:

Մեր Հայրենիք, ազատ, անկախ,
Որ ապրել է դարեդար,
Իր որդիքը արդ կանչում է
Ազատ, անկախ Հայաստան:

Հայաստանի դրոշը

Հայաստանի դրոշը կազմված է կարմիր, կապույտ և նարնջագույն գույներից՝ հավասարաչափ հորիզոնական շերտերով: Կարմիր գույնը խորհրդանշում է հայ ժողովրդի մշտական պայքարը Հայաստանի անկախության և ազատության համար, կապույտը՝ խաղաղ երկնքի ներքո հայ ժողովրդի ապրելու կամքը, իսկ նարնջագույնը՝ հայ ժողովրդի աշխատասիրությունը:

Հայաստանի պետական զինանշանը

Հայաստանի պետական զինանշանի կենտրոնական մասում՝ վահանի վրա, պատկերված են հայկական չորս թագավորական տոհմերի՝ Արշակունիների, Արտաշեսյանների, Բագրատունիների և Ռուբինյանների զինանշանները, որոնց կենտրոնում գտնվում է բիբլիական Արարատ լեռան՝ գագաթին Նոյան տապանով:

Հայաստանի Հանրապետություն

Հայաստանի Հանրապետությունը անկախ, ժողովրդավարական պետություն է: Պետության գլուխը համարվում է հանրապետության նախագահը, բարձրագույն

օրենսդիր մարմինը Ազգային ժողովն է, իսկ գործադիրը՝ կառավարության գլուխ հանդիսացող վարչապետը: Պետական լեզուն հայերենն է:

Պետական կրոնը

301թվականին Հայաստանն առաջինն է ընդունել քրիստոնեությունը՝ որպես պետական կրոն: Հայ Առաքելական Եկեղեցին համարվում է հնագույն ազգային եկեղեցիներից ու քրիստոնեական համայնքներից մեկը: Հայաստանաբնակ հայերի մեծամասնությունը պատկանում է Հայ Առաքելական Եկեղեցուն: Եղեղեցին գլխավորում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որի նստավայրը համարվում է Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի տաճարը:

Այս փոքրիկ և արևոտ երկրում շատ տեսարժան վայրեր կան՝ Գառնու տաճարը, Գեղարդը, Էջմիածինը, Խոր Վիրապը, Ամբերդը, Տաթևի վանքը, Սևանա լիճը: Այն հինավուրց մշակութային ժառանգություն ունի, հարուստ է պատմական եկեղեցիներով, վանքերով, հուշարձաններով, սարերով ու ձորերով, որոնք մեր հայրենիքի պատմության լուռ վկաներն են:

ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

«Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ , կործանվում դրա պակասի պատճառով»

Գարեգին Նժդեհի

Այսօր հայրենասիրական դաստիարակությունը մեր երկրում համարում եմ ազգային գերագույն նպատակներից մեկը: Հայրենասիրական դաստիարակությունը, հանդիսանալով անձի համակողմանի զարգացման կարևորագույն հատկանիշներից մեկը, հայրենիքի նկատմամբ աստիճանական և անընդհատ իրագործվող սիրո և հարգանքի դրսևորումն է: Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիարակության նպատակն է երեխայի հոգում սեր սերմանել բնության, տան և ընտանիքի, հայրենիքի պատմության նկատմամբ և վերջապես ձգտումը՝ տեսնել հայրենիքը ծաղկուն և բարգավաճ: Նախադպրոցական տարիքի երեխաների մեջ հայրենասիրական զգացմունքների դաստիարակումը բարոյական դաստիարա-կության խնդիրներից է: Պետք է նկատի ունենալ, որ նախադպրոցականը հուզականորեն է ընկալում իրեն շրջապատող իրականությունը, հետևաբար հայրենասիրական զգացմունքները հայրենի քաղաքի, հայրենի երկրի նկատմամբ դրսևորվում են հիացմունքի զգացումով: Որպեսզի երեխաները սիրեն իրենց հայրենիքը, քաղաքը, գյուղը,մենք պետք է նրանց ցույց տանք գրավիչ կողմից: Նրանց քաղաքացիական դիրքորոշումն ու հայրենասիրության ձևավորումն ի վերջո կախված է նրանից, թե ինչպես կհայտնվի հայրենի քաղաքը նախադպրոցական տարիքի երեխայի առջև, ինչ հույզեր ու ապրումներ կառաջացնի, որքանով կհարստացնի երեխայի երևակայությունը:

Մեր երազած հայրենիքն ունենալու համար, ինչպես ասվում է Հայոց պատմությունը 6-7-րդ դասարանի (ուսուցչի ձեռնարկում Ա. Ղուկասյան, Ս. Գյուլբուդաղյան) պետք է՝ «Դաստիարակել ջերմ հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի ու ժողովրդի

նկատմամբ ազգային արժանապատվության ու հպարտության, անմնացորդ սիրո և հարգանքի զգացում»: Հայրենասիրական դաստիարակության մասին Վ. Սուխոմլինսկին ասում է, որ «հայրենիքի նկատմամբ սերը կամքի ուժի է վերածվում այն ժամանակ, երբ մարդու գիտակցության մեջ ամրապնդվում են հայրենի վայրերի և լեզվի հետ կապված կերպարներ, երբ առաջանում է հպարտության զգացում, որ այս ամենը քո երկիրն է»: Հայրենասիրությունը դրսևորվում է տվյալ երկրում ապրող ժողովրդի նկատմամբ սիրով: Երբ ասում ենք հայրենիք, առաջին հերթին հասկանում ենք հայրենիքում ապրող մարդկանց: Մեզանից յուրաքանչյուրի համար հայրենիքը սկսվում է իր տնից, իր բակից, իր այգուց և մայրենի լեզվից: Աճող սերնդին հայրենասեր դաստիարակել նշանակում է մշտապես աշխատել հայրենիքի բարգավաճման, ժողովրդի բարօրության, բարեկեցության բարձրացման գործին, նրան հաղորդակից և մասնակից դարձնելու համար, մասնակցել տնտեսության, մշակույթի, գիտության ու տեխնիկայի զարգացմանը, ժողովրդին պաշտպանել թշնամու ոտնձգություններից, հարկ եղած դեպքում կյանքը չխնայել հայրենի երկրի համար, քաղաքացու մեջ ձևավորել հպարտության զգացում սեփական երկրը: «Ապրել ու մեռնել հայրենիքի համար, ահա խնդիրը, որ իբրև նպատակ՝ ես ընտրել եմ ինձ համար իմ մանկության օրերից»,- ահա թե ինչպես էր պատկերացնում հայրենասիրությունը հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը: Հայրենասիրություն հասկացությունը օրգանական կապի մեջ է տվյալ երկրի պատմության հետ, քանի որ հայրենիքը միայն արդի ժամանակաշրջանի երկիրը չէ, այլ նրա ողջ պատմությունը, նրա մշակույթը, անցյալը, ներկան, ինչպես նաև ապագան: Ցավոք առկա է հայրենասիրական դաստիարակության վերաբերյալ արդի մեթոդական գրականության պակաս: Այսօր, ինչպես երբևէ, կարևոր է ուսուցման և դաստիարակության միջոցների և մեթոդների ընտրությունը: Կարևոր է իրականացնել հարազատ երկրի ու ժողովրդի պատմական, պաշտպանական, մշակութային և հոգևոր աշխարհի արժեքների հետ կապող անմիջական շփումներ: Այս պարագայում հայրենաճանաչողական այցերը, էքսկուրսիաները հնարավորություն ունեն միաժամանակ ազդելու սաների մտավոր, կամային և հուզական ոլորտների վրա:

Մեծ նշանակություն ունի նախադպրոցականներին ծանոթացնել պատմական, մշակութային, ազգային, աշխարհագրական ինքնատիպությանը: Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները , փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը,պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տողի ու դերի մասին: Հենց այս պատճառով է, որ նախադպրոցական կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա սաների հայրենաճանաչողության ձևավորումն կարևորությունը: Հայրենաճանաչո-ղության նշանակությունը առաջին հերթին նպատակաուղղված է սաների գիտելիքների, պատմական ուղու,նրա սոցիալական, հոգևոր և բարոյական փորձի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելուն, պատմական ժամանակաշրջանի վերաբերյալ որոշակի պատկերացումներ ձևավորելուն :

Հայրենիքի յուրաքանչյուր անկյունը ճանաչելուց և արժևորելուց են սկսում անվերապահորեն սիրել իրենց հողն ու ջուրը,մայրենի լեզուն, ինչը հայրենասիրության առաջին նախապայմանն է, ինչպես ասում է Յու. Ամիրջանյանի,Ա.Սահակյանի Մանկավարժություն ուսումնական ձեռնարկում,- «Ցանկացած մարդու համար իր հայրենիքն սկսվում է իր տնից,իր բակից,իր այգուց: Հայրենիքն սկսվում է իր երկրի մի թիզ հողից,մի կում ջրից,մի հանդամասից,մի կտոր երկնքից: Եվ ամենակարևորը՝իր մայրենի լեզվից: Եթե այս ամենը մարդը չի հասկանում,ապա «հայրենիք» հասկացությունը նրա համար կդառնա ինչ-որ անորոշություն»

ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ, ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Երեխայի ազգային, բարոյական, հայրենասիրական դաստիարակության գործում կարևորվում է ազգային, ժողովրդական բանահյուսության դերը: Այն անսպառ աղբյուր է հայեցի դաստիարակության համար, որի միջոցով երեխայի մեջ դաստիարակվում են ազգային լավագույն հատկանիշները: Հեքիաթներում, ասացվածքներում, հանելուկներում ամփոփված է ժողովրդական իմաստությունը, որը դարեր ի վեր կրթել է մատաղ սերնդին, նրանց մեջ սերմանել հպարտություն իրենց ազգության, երկրի, սեր՝ մայրենի լեզվի, ընտանիքի, իրենց արմատների նկատմամբ: Երեխաները ծանոթանալով հայ բանահյուսությանը կհամոզվեն ժողովրդական խոսքի ճշմարտության մեջ, իրենց խոսքում կներառեն և կօգտագործեն բանահյուսությունից վերցված փոխաբերական արտահայտություններ, դիպուկ խոսքեր,հաճույքով կգուշակեն հանելուկներ, կարտասանեն, կկատարեն ազգային խաղիկներ, փոքրիկ բանաստեղծություններ և այլն: Նախադպրոցական կրթական գործընթացում առավել օգտագործվող բանահյուսական ժանրերն են.

- *Առակ*
- *Հեքիաթ*
- *Հանելուկ*
- *Ասացվածք*
- *Առասպել*
- *Ավանդություն*
- *Էպոս:*

Նախադպրոցական տարիքի երեխաների առօրյայում բանահյուսական ժանրերի և տարրերի օգտագործումը դրական ազդեցության է ունենում երեխայի զարգացման վրա: Բանահյուսական ժանրերը որպես բարոյական դաստիարակության արդյունավետ միջոցներ երեխայի մեջ ձևավորում են հաջողության հոգեբանության,

բարոյական արժեքներ, քաջ և արդար հերոսներին ընդօրինակելու ցանկություն, սերմանում սեր իր տան, ընտանիքի, հայրենիքի հանդեպ, նպաստում բարեկամության և սիրո վերաբերյալ պատկերացումների ամրապնդմանը:

Երաժշտությունը նույնպես երեխայի դաստիարակության կարևոր և արդյունավետ միջոցներից է: Երաժշտությունը արվեստի այն եզակի ճյուղն է, որի հետ երեխաները շփվում են ի ծնե: Այն նպաստում է այլ մարդկանց ուրախություններն ու տխրությունները զգալու, կյանքի հանդեպ գեղեցիկ վերաբերմունք ձեավորելու և բարոյական այլ որակների (սեր, բարություն, կամքի ուժ և այլն) զարգացմանը: Երաժշտական դաստիարակության նպատակն է երեխաներին հաղորդակից դարձնել ազգային (հայկական ժողովրդական և ազգագրական) և համամարդկային երաժշտական մշակույթին, ինչպես նաև ծանոթացնել ազգային նվագարաններին (դուդուկ, զուռնա, թառ, քամանչա, դհոլ, քանոն և այլն):

Հայրենաճանաչողության նպաստող մեթոդ է նաև էքսկուրսիան, որը հնարավորություն է տալիս կոնկրետ ու վառ փաստերի վրա երեխաներին ցույց տալ ուսումնասիրվող առարկաների ու երևույթների միջև եղած կապերը, պատճառի ու հետևանքի փոխկապվածությունը և մարդու վերաստեղծող ու վերաշինող ուժը: Էքսկուրսիաները ընդլայնում են երեխաների մտահորիզոնը, նրանց միտքը հարստացնում են նոր տպավորություններով, անմիջականորեն դիտել են տալիս այնպիսի առարկաներ ու երևույթներ, որոնք մանկապարտեզ բերել հնարավոր չէ, հետաքրքրություն են առաջացնում դեպի իրենց շրջապատի բույսերը, կենդանիները, մարդկային հասարակությունը և մարդու աշխատանքը բնության և հասարակության մեջ: Էքսկուրսիաները բացառիկ կարևոր նշանակություն ունեն նաև երեխաների խոսքի զարգացման համար :

Երեխայի բաց հոգու աչքերի մեջ ամենազորեղը առաջին տպավորությանն է, և դա հետագայում սնում է նրա սիրտն ու հոգին, թևավորում նրա երևակայությանը, ուրեմն նախ և առաջ նրան պետք է մատուցել ամենալավը և փորձվածը՝ ամենալավ երգերն ու պարերը, ամենալավ խաղերն ու գույները, այսինքն՝ նյութի թե ընտրության և թե մատուցման ձևը պիտի լինի հնարավորին չափ միակը, լավագույնը:

ԻՄ ԱՆՈՒՇ ՀԱՅԱՍՏԱՆ (ԲԱՑ ԴԱՍԻ ՊԼԱՆ, ՊԱՐԱՊՄՈՒՆՔ ՏԱՐԱՏԱՐԻՔ ԽՄԲՈՒՄ)

Թեմա- «Իմ անուշ Հայաստանն»

Նպատակները- Հստակեցնել և ամրապնդել երեխաների գիտելիքները՝ ՀՀ-ի վերաբերյալ: Ծանոթացնել ՀՀ դրոշին, զինանշանին, օրհներգին, տեսարժան վայրերին, հուշարձաններին (նկարների և տեսանյութերի միջոցով):

Վերջնարդյունք –Երեխաները կստանան մեր պատմության մասին նոր գիտելիքներ, կճանաչեն մեր պետական խորհրդանիշները, պատմամշակութային հուշարձանները, կսովորեն նոր հեքիաթներ, առակներ, առասպելներ և բանաստեղծություններ հայրենիքի մասին, կճանաչեն մեր հերոսներին, գաղափար կունենան հայրենասիրության, այգային պատկանելության մասին:

Կապը չափորշչի հետ – **1. ԽՀ՝ խոսքի և հաղորդակցական ոլորտ**- *(* **ա.** *սանն ընկալում և վերարտադրում է լսած փոքրիկ պատմությունները,* **է.** *դրսևորում է հետաքրքրություն գրքերի նկատմամբ, արտահայտում գրական ստեղծագործություն լսելու ցանկություն,* **ը**. *հաղորդակցման ընթացքում ոչ միայն արտահայտում է սեփական վերաբերմունքը որևէ երևույթի նկատմամբ, այլև դրսևորում է դիմացինին լսելու կարողություն,)*

2. ՀՍԱ ՝ հուզական, սոցիալ-անձնային ոլորտ- *(* **զ.** *ուսումնասիրում է իր անձի, ընտանիքի անդամների, շրջապատող մարդկանց առանձնահատկությունները, ցուցաբերում է հստակ վերաբերմունք ընտանիքում կամ մանկապարտեզում կատարվող իրադարձություններին, է. դրսևորում է սեփական հույզերի ու գործողությունների, մտքերի և վերաբերմունքի մասին խոսելու պատրաստակամություն).*

3. **Ի՝ իմացական ոլորտ** *(գ. հասակակիցների հետ համատեղ գործունեության ընթացքում դրսևորում է իմացական ակտիվություն, երևակայություն, կարծիք հայտնելու կարողություն,.).*

Անհրաժեշտ պարագաներ- ՀՀ զինանշան, դրոշ, ձայնասկավառակներ, նկարներ, տեսանյութեր:

Դասը սկսվում է ՀՀ օրհներգով:

Դաստիարակ-Ի՞նչ եք հասկանում հայրենիք ասելով:

Երեխաներ-Հայրենիքը որտեղ մենք ապրում ենք, որտեղ ծնվել և մեծանում ենք, այստեղ ապրում են մեր հարազատները: Հայրենիքը դա մեր մանկապարտեզն է, մեր ընկերներն են, մեր ծնողները: Հայրենիքը դա մեր գյուղն է, մեր մարզն է, մեր մայրաքաղաք Երևանն է:

Դաստիարակ – Ներկայացել խորհրդանիշները՝ Հայաստանի պետական դրոշը, զինանշանը, օրհներգը: Պատմել բանակի և հայրենիքին ծառայելու կարևորության մասին:Դաստիարակը ցուցադրում է զինանշանը, պատմում որ արծիվը իմաստուն ժողովրդի խորհուրդն է, առյուծը՝ ժողովրդի ուժը: Եվ պատմում է 4 թագավորությունների մասին, Արարատ լեռան և Նոյյան տապանի մասին: Ցուցադրելով դրոշը դաստիարակը խոսում է դրոշ գույների խորհուրդների մասին: Փոքրիկ բանաստեղծական և երաժշտական դադար.

https://youtu.be/7qwjqn-z_xM?si=xOktbA_sXfG-Q-oa

Իմ Հայաստան, իմ Հայրենիք,

Երկնքի չափ սիրում եմ քեզ,

Թեև փոքրիկ, շատ եմ փոքրիկ,

Քո մասին շատ բան գիտեմ ես*:*

Երեխաները ըստ ցանկության արտասանում են հայրենիքի մասին բանաստեղծություններ:

https://youtu.be/ZdJB55u12jo?si=K9zz_ip1BXrAD3Pt

Վերջում կիստակեցվի երեխաների ստացած գիտելիքները թեմայի վերաբերյալ, հարցերի միջոցով ևս մեկ անգամ տեղի կունենա ամրապնդում: Դասի ավարտին սաները լցված կլինեն հայրենասերի ավելի մեծ ոգով: Հայրենասիրությունը մեր արյան մեջ է, մեր երակներում, մեր սրտի զարկում, մեր ամեն շնչում:

ՅՈԹ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ
Հայը դարերով սիրով է պահել
Յոթ թանկ սրբություն՝
Հողը, պատիվը,շինարար ոգին,
Հավատը,լեզուն:
Սուրբ անուններ են եղել դարերվ
Հայ ընտանիքը,
Եվ ամենից վեր,ամենից լուսե՝
Մայր հայրենիքը:

Սուրեն Մուրադյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ես եկել եմ այն եզրահանգման, որ մանկապարտեզի սաների հայրենասիրական դաստիարակությունը բարդ գործընթաց է: Դեռ վաղ մանկությունիից պետք է սեր սերմանել երեխայի հոգում ու սրտում, նա պետք է գիտակցի հայրենիք ասվածի կարևորությունը: Պետք է հնարավորություն տալ երեխաներին տեսնելու սեփական հայրենիքի գեղեցկությունն ու հիանալ դրանով: Երեխաները պետք է ճանաչեն և արժևորեն իրենց հայրենիքը, Հայաստան աշխարհը:Երեխաների մոտ հայրենասիրական դաստիարակության ձևավորումը տեղի է ունենում կյանքի, կրթության և դաստիարակության օբյեկտիվ պայմանների, տարբեր աշխատանքների գործընթացում:Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիարակության արդյունավետությունը մեծապես կախված է նախադպրոցական հաստատության և ընտանիքի համակարգված աշխատանքից,ինչը պետք է իրականացվեն զուգահեռաբար՝ լրացնելով միմյանց:

Ամենակարևորը, վերջնարդյունքում մենք կունենանք արդարության ոգով, ազատ ու գիտակից, ազգային նյութական և ոչ նյութական ժառանգությունը ճանաչող,ազգայինը առժևորող, հայրենասեր. իր անկախության ու պետականության համար պայքար սերունդ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մարության Ս. Ա., Դալլաքյան Ա. Մ., Նախադպրոցական մանկավարժություն, Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից որպես դասագիրք մանկավարժական բուհերի ուսանողների համար, էջ 126
2. Ամիրջանյան Յու.Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, Եր., 2005,էջ 456:
3. Ղուկասյան Ա. Հայոց պատմությունը 6-7-րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2007.էջ 88
4. https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5 %A1%D5%B6
5. «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես 2014թ
6. https://youtu.be/7qwjqn-z_xM?si=xOktbA_sXfG-Q-oa
7. https://youtu.be/ZdJB55u12jo?si=K9zz_ip1BXrAD3Pt
8. Դ. Գասպարյան, Ն. Հեքեքյան, Մայրենի 4-րդ դասարան, Երրորդ, վերամշակված հրատարակություն, ԷԴԻԹ ՊՐԻՆՏ, Երևան 2022